ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

02-ը սեպտեմբերի 2024թ.

ՈՒՂԵՐՁ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի՝
ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 2-ը Արցախի Անկախության օրն է. 33 տարի առաջ այս օրը Արցախը հռչակեց իր անկախությունը Խորհրդային միությունից: Տարիներ շարունակ անսահման հպարտությամբ, ուրախությամբ և տոնական միջոցառումներով նշվող Սեպտեմբերի 2-ը, այսօր նույն տրամադրությունը չունի, սակայն մենք միասնաբար չպետք է մոռացության տանք մեր հայրենիքի երբեմնի հաղթական ու հպարտ էջերը:

Արցախի Անկախության օրը ուզում եմ առաջնահերթ խորին հարգանքով ու խոնարհումով հիշենք արցախյան ազատամարտերում իրենց կյանքը նվիրաբերած հայորդիներին: Արցախի պաշտպանական ու ազատագրական մարտերում մենք չափազանց թանկ գին ենք վճարել. տվել անդառնալի կորուստներ:

Կորսված Արցախն այսօր մեզ համար վառ հիշողություն է, նվիրական երազանք, շատ մոտ, միևնույն ժամանակ հեռվում գտնվող սրբազան հայրենիք, որի վերադարձի տեսլականով պիտի ապրենք ու գործենք յուրաքանչյուրս:

Սիրելի՛ արցախցիներ.

Ձեզ համար երբեմնի տոնական Արցախի Անկախության օրը ուզում եմ չկորցնեք հավատն ու լավատեսությունը, զինվեք համբերությամբ և գործեք արցախցուն վայել վճռականությամբ ու հաստատակամությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ